

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

29.05.2006թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Դ. Մարտիրոսովա (*Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում՝ երեք հարց.

1. «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության համար առողջապահական մոդուլ» հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Արժույթի միջազգային հիմնադրամի ավագ տնտեսագետ Գարբիս Իրադյանին տրամադրելու թույլտվության մասին.

/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

3. Այլ հարցեր

3.1 Հաշվետվություն 2006թ. ապրիլի 25-ից 28-ը ժնևում կայացած «Ազգային հաշիվներ» խորագրով ութերորդ համաժողովին մասնակցության վերաբերյալ.

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

3.2 Հաշվետվություն 2006թ. մայիսի 17-19-ը Բիշկեկում կազմակերպված «Ռեզումեարական պլանավորումը վիճակագրությունում Կենտրոնական Ասիայի երկրների համար» խորագրով համաժողովին մասնակցելու վերաբերյալ.

/Ձեկուցող՝ Լ. Միրզոյան/

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության համար առողջապահական մոդուլ» հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Հաստատել «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության համար առողջապահական մոդուլ» հարցաթերթը:

/Անհատական /

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից՝ 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան Արժույթի միջազգային հիմնադրամի ավագ տնտեսագետ Գարբիս Իրադյանին տրամադրելու թույլտվության մասին.

/Ձեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Արժույթի միջազգային հիմնադրամի ավագ տնտեսագետ Գարբիս Իրադյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 01.04.2004թ.-31.03.2005թ. իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան հետևյալ՝ տրամադրվող անվանագերծված տեղեկատվությունը գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Այլ հարցեր

3.3 Հաշվետվություն 2006թ. ապրիլի 25-ից 28-ը Ժնևում կայացած «Ազգային հաշիվներ» խորագրով ութերորդ համաժողովին մասնակցության վերաբերյալ.

/Ձեկուցող՝ Վ. Դանիելյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2006թ. ապրիլի 25-ից 28-ը Ժնևում կայացած «Ազգային հաշիվներ» խորագրով ութերորդ համաժողովին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3.4 Հաշվետվություն 2006թ. մայիսի 17-19-ը Բիշկեկում կազմակերպված «Ռազմավարական պլանավորումը վիճակագրությունում Կենտրոնական Ասիայի երկրների համար» խորագրով համաժողովին մասնակցելու վերաբերյալ.

/Ձեկուցող՝ Լ. Միրզոյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2006թ. մայիսի 17-19-ը Բիշկեկում կազմակերպված «Ռազմավարական պլանավորումը վիճակագրությունում Կենտրոնական Ասիայի երկրների համար» խորագրով համաժողովին մասնակցելու վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան